12882

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

«22» 10 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0201-21

Ձեռնարկողը՝ ***«Հայնախագիծ» ԲԲԸ***
ՀՀ, ք. Երևան, Չարենցի 1

Գործունեությունը՝ ***«Աշոցք» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի (ՄՄՀՏՊՓ) նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվություն***
Շիրակի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խ. Մարտիրոսյան

Առդիր՝ 9 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0201 - 21

< 22 > 10 **2021թ.**

Շիրակի մարզի «Աշոցք» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝	«Հայնախագիծ» ԲԲԸ
Ներկայացված նյութեր՝	Նախագծային փաստաթղթեր, ՇՄԱՌԳ հաշվետվություն
Գտնվելու վայրը՝	Շիրակի մարզ

Ներածական մաս. Շիրակի մարզի Աշոցք-ի տարածաշրջանի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի (այսուհետ ՄՄՀՏՊՓ) նախագծերը ներառում են Աշոցք, Բավրա, Զույգաղբյուր, Թավշուտ, Կարմրավան, Կրասար, Ղազանչի, Մեծ Սեպասար, Սարագյուղ, Սիզավետ, Փոքր Սեպասար (ընդամենը 11) գյուղական համայնքները: Շիրակի տարածաշրջանի ՄՄՀՏՊՓ նախագծի «Շրջակա միջավայրի բարելավման ու պահպանման միջոցառումներ» բաժինը մշակված է ՄՄՀՏՊՓ-ին համապատասխան, հաշվի առնելով նշված համայնքների 2017-2025թթ. զարգացման ծրագրերը:

Նախատեսվող գործունեությունը, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասով հանդիսանում է հիմնադրութային փաստաթուղթ:

Նկարագրական մաս. Շիրակի մարզի «Աշոցք»-ի տարածաշրջանի ՄՄՏՀՆ նախագիծն իրենից ներկայացնում է փաստաթուղթ, որտեղ արտացոլված են բնական պաշարների (օդ, ջուր, հող, բուսականություն, հանքեր) ինտենսիվ և արդյունավետ օգտագործման վերաբերյալ նախագծային, պրակտիկ գործունեության արդյունքները, տնտեսության ճիշտ կազմակերպման, կոմունիկացիաների, կաթսայատների ճիշտ տեղադրման, անթափոն տեխնոլոգիաների և մաքրման սարքավորումների կիրառմամբ, կենցաղային և արդյունաբերական թափոնների մաքսիմալ օգտագործման և վնասազերծման ճանապարհով:

Շիրակի մարզի վերը նշված համայքների տարածքային քաղաքաշինական խնդիրների լուծման ընթացքում շրջակա միջավայրի պահպանության արդյունավետ կազմակերպման համար համալիր կերպով գնահատվել են առկա բնապահպանական խնդիրները, գոյություն ունեցող իրավիճակը և ընտրվել են զարգացման այնպիսի սկզբունքներ, որոնք թույլ կտան ներդաշնակորեն լուծել սոցիալական, տնտեսական և բնապահպանական խնդիրները:

Բնակավայրերի զարգացման ծրագրերի մշակման ժամանակ շրջակա միջավայրի տարրերի (ջուր, օդ, հողաբուսական ծածկույթ, կենդանական աշխարհ) պահպանության միջոցառումների մշակումը սերտորեն կապված է տարածքի հատակագծային կազմակերպման խնդիրների հետ:

Շիրակի տարածաշրջանի ՄՄՀՏՊՓ զարգացման ծրագիրը նախատեսվում է կազմել կայուն զարգացման սկզբունքների հիման վրա, որը տնտեսական զարգացման բոլոր նախապատվությունները համադրում է բնական միջավայրի ինքնավերարտադրողականության հետ:

Բնակավայրի տարածքի կարևոր էկոլոգիական հիմնախնդիրները, որոնք նպաստելու են տարածքի էկոլոգիական հավասարակշռության պահպանմանը, լուծվելու են տարածքի հատակագծային կառուցվածքի մշակման գործընթացում:

«Աշոցք»-ի տարածաշրջանի ՄՄՀՏՊՓ նախագծում սանիտարապաշտպանիչ գոտիների և սանիտարական խզման (разрыв) չափերն ընդունված են համաձայն СН245-71 «Արդյունաբերական ձեռնարկությունների նախագծման սանիտարական նորմեր»: Էլեկտրաենթակայանների ՍՊԳ-ի չափերն ընդունված է դրանց տիպից, տրվող լարումից, տրանսֆորմատորի հզորությունից և քանակից ելնելով, համաձայն ՍՆ և Կ II-12-77 «Պահպանություն աղմուկից» և ՀՀՇՆ 22-04-2014 «Պաշտպանություն աղմուկից» նորմերի և կանոնների, ԳՈՍՏ «Ուժային, յուղային տրանսֆորմատորներ, թույլատրելի աղմուկի նորմեր և աղմկային փորձարկումների մեթոդներ»: ՍՊԳ-ների չափն ընդունված է 20 մ:

- Էլեկտրահաղորդման գծերի (ԷՀԳ) պաշտպանական գոտիների չափերն ընդունված են համաձայն «Մինչև 1000Վ էլեկտրական ցանցերի պահպանման կանոններ»-ի հիման վրա,
- գետնի վրա եզրային լարերի պրոյեկցիայի հեռավորությունը:
- Մայրուղային խողովակաշարերից սանիտարական խզման չափերը ընդունված են խողովակների տրամագծից, ճնշումից և դասից կախված, համաձայն ՍՆ և Կ 2.05.06-85 «Մայրուղային խողովակաշարեր»:
- Խմելու-տնտեսական ջրառների ՍՊԳ-ի չափերը ընդունված են համաձայն Սն և Կ 2.04.02-84 «Ջրամատակարարում»: Արտաքին ցանցեր և կառուցվածքներ»:
- «Խմելու-տնտեսական նշանակության ջրմուղների և ջրամատակարարման աղբյուրների սանիտարական պահպանման գոտիներ» N2-III-Ա2-2 սանիտարական նորմերը և կանոնները հաստատելու մասին ՀՀ առողջապահության նախարարի 2002թ. նոյեմբերի 29-ի թիվ 803 հրամանը:
- Գերեզմանների ՍՊԳ-ն ընդունված է 300մ, ինչպես նաև հաշվի է առած ՀՀ կառավարության նոյեմբերի 23-ի «Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանների ու դիակիզարանների շահագործման մասին» 2006 թվականի N1910-ն որոշման հավելված 4-ի 7-րդ կետը:
- Աղբահավաք վայրերի համար ՍՊԳ-ն ընդունված է 300մ: Աղբահավաք վայրերի քանակը՝ 10:
- Կենսաբանական մաքրման կայանի ՍՊԳ-ն ընդունված է 300մ: ՍՆ և Կ 2.04.03-85 Կոյուղի: Արտաքին ցանցեր և կառուցվածքներ:
- Օրգանական ծագման թափոնների վարակազերծման և թաղման վայրերի ՍՊԳ-ն ընդունված է 300մ:

«Աշոցք» -ի տարածաշրջանի ՄՄՀՏՊՓ նախագիծը ընդգրկում է 52593.24 հա տարածք, որտեղ բնակչության թիվը կազմում է 7547 մարդ: Տարածքում առկա են բնական, բուժական, առողջապահական, հանքահումքային ռեսուրսներ:

Նշված համայնքներում ռեսուրսների հիմնական տեսակներն են՝ ջրեր, հողեր, գեղատեսիլ և տեսարժան վայրեր տուրիզմի զարգացման համար: Տարածքում առկա են մարդկային ռեսուրսներ: «Աշոցք» -ի գյուղական և քաղաքային համայնքներում առկա են սոցիալ-

կենցաղային, ինժեներա-տրանսպորտային և կոմունալ ենթակառուցվածքների վերաբերյալ հիմնախնդիրներ: Ներկա իրավիճակում բնակչության հիմնական զբաղմունքն է՝ բուսաբուծությունը, այգեգործությունը, անասնապահությունը, հացահատիկի մշակումը, հողագործությունը և առևտուրը:

Ներկայումս համայնքների մթնոլորտային օդն աղտոտվում է արդյունաբերական ձեռնարկությունների, բնակելի և հասարակական շենքերի ջեռուցման անհատական սարքերի և ավտոտրանսպորտի արտանետումներով:

Հիմնականում արդյունաբերական ձեռնարկությունները պատկանում են սանիտարական վտանգավորության IV-V դասին, արտադրական արտանետումները աննշան են: Ֆոնային աղտոտվածությունը աղտոտող բոլոր նյութերով համայնքներում զգալիորեն ցածր է սահմանային թույլատրելի կոնցենտրացիաներից (ՍԹԿ):

Համայնքներում գործում են մի շարք փոքր ձեռնարկություններ, որոնք գործում են պլանային արտադրողականության 5-10%-ի սահմաններում:

«Աշոցք» համայնքներում գործում են անդեզիտի, բազալտի, տուֆի և կրաքարի հանքավայրերը: Հանքերը հանդիսանում են հիմնականում անօրգանական փոշու արտանետման աղբյուր: Ընդամենը արդյունաբերական արտանետումները կազմում են 21,7 տ/տարի:

Հիմնականում «Աշոցք» -ի համայնքները գազաֆիկացված են 28-51%, բացառությամբ 6 համայնքների – Զույգաղբյուր, Թավշուտ, Կարմրավան, Ղազանչի, Սարագյուղ, Սիզավետ: Մթնոլորտ վնասակար արտանետումների քանակը ջեռուցումից, արդյունաբերությունից և ավտոտրանսպորտից կազմում է 2954,73 տ/տարի: Հիմնականում համայքների մթնոլորտ վնասակար արտանետումներից տնտեսությանը հասցված տնտեսական վնասը կազմում է 75,0 մլն. դրամ տարի: Մթնոլորտ արտանետումների հիմնական ներդրումը՝ 97,8 %, ավտոտրանսպորտն է:

Նշված գյուղական համայքները գտնվում են Աշոցք ջրավազանային կառավարման տարածքում, Աշոցք գետի ջրավազանում: Աշոցք գետի մեջ նշված համայնքների տարածքներում թափվում են տնտեսակենցաղային հոսքաջրերի մի մասը, ինչը հանդիսանում է գետի աղտոտվածության հիմնական աղբյուրը: Վերջին տարիներին Աշոցք գետի կիրճում զանազան սպասարկման օբյեկտների շահագործման արդյունքում, զգալիորեն ավելացել է գետի աղտոտվածությունը:

Հեռանկարում, բնակչության աճի դեպքում կավելանա նաև գետ թափվող տնտեսակենցաղային կեղտաջրերի քանակը, ինչը իր հերթին կհանգեցնի գետի աղտոտվածության ավելացմանը: Անհրաժեշտ է նշված համայնքների համար կեղտաջրերի մաքրման կայանի կառուցում:

Համայնքներում աղմուկի աղբյուր է հանդիսանում ավտոտրանսպորտը: Գյուղերում ճանապարհները հիմնականում տեղական նշանակության են և մեքենաների անցուդարձը ցածր է: «Աշոցք» -ի համայնքների տարածքով անցնում է Մ-1 ավտոմայրուղին: Տրանսպորտային հոսքերի աղմուկն առաջանում է մեքենաների աղմուկից տրանսպորտի արագությունից և շարժման ինտենսիվությունից: «Աշոցք» համայնքներում ավտոմեքենաների մաքսիմալ ժամային անցուդարձը կկազմի 130 միավոր մեկ ժամում: Աղմուկի մակարդակը փողոցի բանուկ մասի եզրից 7.5 մետր հեռավորության վրա որոշված է տարբեր փողոցներում: Աղմուկի ամենաբարձր մակարդակը կազմում է 50 դԲԱ, 70 դԲԱ-նորմայի դեպքում: Այսպիսով կարելի է եզրակացնել, որ «Աշոցք» տարածաշրջանի բնակավայրերում ձայնի էկվիվալենտ մակարդակը 25մ հեռավորության վրա ճանապարհից, հաշվի առնելով կառուցապատված զանգվածը կկազմի 40-45 դԲԱ, նորման 45-55 դԲԱ:

«Աշոցք» միկրոռեգիոնը ներառում է 27494.68 հա հողեր, այդ թվում՝:

-Գյուղատնտեսական հողեր- 20131.19 հա,
-բնակավայրեր- 1065.38 հա,
-արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության – 186.45 հա,
-Էներգետիկայի, կապի, տրանսպորտի – 153.76 հա,
-հատուկ պահպանման տարածքներ – 5752.78 հա,
-հատուկ նշանակության – 14.39 հա,
-անտառային – 28.51 հա,
- ջրային – 124.22 հա:

Աշոցք ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԻ ՏԵԽՆԻԿԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ /Ձև 3/				
	Տեխնիկատնտեսական ցուցանիշները	*Չափման միավոր*	*Փաստացի*	*Հեռանկարային*
1	ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԻ ԴԵՊՔՈՒՄ ՆԱԽԱԳԾՎՈՂ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՀՈՂԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍԸ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝	հա	28409.2	28409.2
2	ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐ	հա	1079.831	1116.325
3	ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐ	հա	266.35	268.28
4	ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ, ԿԱՊԻ, ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿՈՄՈՒՆԱԼ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՀՈՂԵՐ	հա	153.98	174.26
5	ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՀՈՂԵՐ	հա	5761.25	5802.74
6	ՀԱՏՈՒԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐ	հա	26.43	26.43
7	ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐ	հա	20915.089	20814.895
8	ԱՆՏԱՌԱՅԻՆ ՀՈՂԵՐ	հա	58.51	58.51
9	ՋՐԱՅԻՆ ՀՈՂԵՐ, ՈՐԻՑ՝	հա	147.76	147.76

Հողի հիմնական աղտոտումը կատարվում է ավտոտրանսպորտի արտանետումներից, կենցաղային և արդյունաբերական թափոնների աղբավայրերից և թափոնակույտերից:

Հողերի աղտոտվածության մակարդակը գնահատված է ցածր (խտության գումարային ցուցանիշը՝ ԽԳՑ<16), աղտոտվածության դասը՝ թույլատրելի, էկոլոգիական իրավիճակը՝ բավարար:

«Աշոցք» -ի տարածաշրջանի գյուղական համայնքների վարչական տարածքի սահմաններում որևէ օգտակար հանածոների հանքեր չկան: Տարածքում չի բացահայտվել նաև որևէ հանածոների երևակումներ:

Բնակավայրերում սանիտարական մաքրման ենթակա տարածքը կազմում է 1825,52 հա մակերես: Համայնքներում գործող աղբավայրերի ընդհանուր քանակը `11: Հաճախակի են աղբի կուտակումները հենց բնակելի տների բակերում: Բացի դրանից, աղբահանումը կատարվում է անկանոն, ինչը հանգեցնում է համայնքների սանիտարական վիճակի վատացմանը: Աղբավայր տանող ամբողջ ճանապարհը և մոտակա տարածքը խիստ աղտոտված են, ուստի այդ ժամանակավոր աղբավայրը ենթակա է կոնսերվացման:

Բնակչության թիվը կազմում է 7547 մարդ ըստ մարզպետարանի տվյալների: Թափոնների ընդհանուր քանակը ներկա իրավիճակում կազմում է 1886,5 տ/տարի:

Թափոններն առաջանում են առողջապահության բնագավառի հաստատություններում: Թափոնները դասակարգվում են հետևյալ կերպ.

-ոչ վարակիչ թափոններ: Այս թափոնները կազմում են ընդհանուր թափոնների 90%-ը: Սրանք իրենց բաղադրությամբ նման են կենցաղային թափոններին, քանի որ վարակի տարածման մանրէներ չեն պարունակում: Այս թափոնների շարքին են պատկանում գրասենյակային աղբը՝ թուղթ, ստվարաթուղթ, փաթեթավորման նյութեր, թերթեր և այլն: Տարեկան քանակը կազմում է 0,35տ: Այս թափոնները հեռացվում են ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի հիգիենիկ և համաճարակային բաժնի կողմից հատկացված աղբավայր: Դասվում են վտանգավորության 4-րդ դասին: Ծածկագիրն է՝ 91200400 01 00 4:

-Վարակիչ թափոններ: Վարակիչ թափոնները դրանք օրգանական ծագման թափոններն են: Ընդհանուր քանակը կազմում է 0.028տ/տարի:

Թափոններն առաջանում են արդյունաբերական ձեռնարկություններում: Արդյունաբերական թափոնների ընդհանուր քանակը կազմում է 4,7տ/տարի: Թափոնները բաժանվում են 2 խմբի՝

-օգտագործման ենթակա թափոնների ընդհանուր քանակը կազմում է 1,7տ/տարի:

-ոչ օգտագործելի թափոնների քանակը կազմում է 3.0 տ/տարի:

Օգտագործման ենթակա թափոնների շարքին են դասվում օգտագործված յուղերը, թեփերը: Օգտագործված յուղերը տեղում ենթարկվում են մեխանիկական մաքրման (ռեգեներացիա) զտմամբ և նստեցմամբ:

Ոչ օգտագործելի թափոնները գործող ձեռնարկությունների բնույթից կախված, թունավոր չեն և պատկանում են ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի հիգիենիկ և համաճարակային բաժնի կողմից համաձայնեցված վայր տեղափոխվող թափոնների խմբին: Այս թափոնները շինարարական, ավտոտրանսպորտային ձեռնարկություններում առաջացած թափոններն են՝ շինարարական աղբ, ավտոմեքենաների մասեր, օգտագործված տարաներ: Քանի որ համայնքները չունեն արդյունաբերական թափոնների համար առանձին աղբավայր, ուստի ոչ օգտագործելի նշված թափոնները թափվում են կենցաղային աղբավայր:

«Աշոցք»-ի տարածաշրջանի համայնքներում տեղակայված է 11 գերեզմանոց, ընդհանուր 12 հա տարածքում: Գերեզմանոցները գործող են: Գերեզմանոցներում սանիտարական պահպանման գոտին պահպանված չէ: Անհրաժեշտ է մշակել միջոցառումներ, որոնք կկարգավորեն գերեզմանոցների տարածքները:

«Աշոցք» համայնքների կանաչապատման համակարգի կայուն զարգացման համար անհրաժեշտ է իրականացնել գործողությունների համալիր ծրագիր, որն իր մեջ կպարունակի ներքոհիշյալ հիմնադրույթները:

-Բնագավառի գործունեությունը համակարգող մասնագիտացված կառուցվածքային ստորաբաժանման ստեղծում համայնքապետարաններում:

-Վերականգնման աշխատանքների, նոր տարածքների կանաչապատման իրականացում, հստակ նախագծերին և ծրագրերին համապատասխան, ապահովելով հետագա ոռոգումը:

-Ոռոգման համակարգի զարգացում և բարեփոխում: Նախատեսված են այգիներ, սպորտային հրապարակներ՝ կանաչ գոտիով, շրջանային նշանակության կանաչ գոտիներ և այլն: Բացի դրանից նախագծված են նաև մագիստրալ ճանապարհների, գերեզմանոցի և այլ օբյեկտների պահպանության գոտիների կանաչապատում:

«Աշոցք» համայնքների տարածքում մթնոլորտն աղտոտող նյութերի ֆոնային աղտոտվածությունը չի գերազանցում սահմանված նորմերը, քանի որ համայնքներում բնակչության թիվը չի գերազանցում տասը հազարը:

Համայնքների մանրամասն վերլուծությունը, առանձին համայնքների համար ինժեներաերկրաբանական հետազոտության աշխատանքների իրականացման և միկրոսեյսմաշրջանացման քարտեզների կազմման, ինչպես նաև համայնքների վերլուծությունն ըստ հատակագծային պայմանների, քաղաքաշինական հիմնակմախքի, ինժեներական ենթակառուցվածքների ապահովվածության, պատմամշակութային հուշարձանների վերլուծությունն ի հայտ են բերում մի շարք խնդիրներ, որոնց հրատապ լուծումը պետք է նպաստի տարածաշրջանի կենսագործունեությանը և հողերի ռացիոնալ օգտագործմանը: Առաջնային ուղղություններ են դառնում տարածքային զարգացման այն հիմնական ուղղությունները, որոնց մեջ ներդրումները նպաստավոր են այդ ոլորտների կայացման և զարգացման համար: Այդ ուղղությունների ընտրությունը կխթանեն.

- արտադրության գոյություն ունեցող հիմնական ճյուղերի զարգացմանը,
- հնարավոր ռեկրեացիոն գոտիների կազմակերպմանը,
- շրջակա միջավայրի բարելավմանն ու պահպանմանը,
- ինժեներական ենթակառուցվածքի, ճանապարհային ցանցի և սոցիալ-կենցաղային համակարգի զարգացմանը,
- պատմամշակութային ժառանգության պահպանությանը,
- բնական և տեխնածին վտանգավոր երևույթներից տարածքի պաշտպանությանը,
- սահմանամերձ տարածքներում բնակչության անվտանգության ապահովմանը,
- միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհները կապող հատվածների վերանորոգման, միջհամայնքային ճանապարհների կապերի վերանայմանն ու կազմակերպմանը,
- բացառել գյուղատնտեսական բարձորակ և հատուկ պահպանվող տարածքների օտարումը, ինչպես նաև պատմամշակութային և բնական հուշարձաններին վնաս պատճառումը,
- հիմնական գործառնական գոտիների վերանայում և հստակեցում,
- բոլոր համայնքների գազաֆիկացում,
- համայնքներում բնակչության ապահովումը խմելու ջրով,
- համայնքներում ոռոգման ջրի ցանցի արդիականացում և ընդլայնում,
- աղբավայրերի նախատեսում սանիտարական գոտիների պահպանմամբ,
- բոլոր գյուղական համայնքների կոյուղացում,
- գյուղական համայնքների կեղտաջրերի մաքրման կայանի նախագծում և գործարկում,
- նախատեսել նոր տեխնոլոգիաներ ջեռուցման ժամանակ՝ արևային էներգիա և բիոգազ, նախատեսել աղբի տեսակավորում:

Տարածքի տնտեսության հեռանկարային զարգացումը. Տարածքային պլանավորման նախագծով հողերի նպատակային նշանակության հողատեսքի, գործառական նշանակության և զբաղեցրած տարածքների էական փոփոխություն չի նախատեսվում: Գերակշռող թվով

գյուղական բնակավայրերի աճի գործակիցը սահմանված է մինչև 1.5%: Տարածաշրջանի բնակչության հաշվարկային թիվը կազմում է 8301 մարդ: Տնտեսության զարգացման հիմնական ճյուղերն են առևտուրը, անասնապահությունը, հողագործությունը, հացահատիկային կուլտուրաների մշակումը, գյուղմթերքների արտադրությունը:

Հեռանկարում համայնքների մթնոլորտային օդի աղտոտման աղբյուրներ կհանդիսանան արդյունաբերական ձեռնարկությունների, բնակելի և հասարակական շենքերի ջեռուցման անհատական սարքերի և ավտոտրանսպորտի արտանետումները: Արդյունաբերական ձեռնարկությունները հիմնականում պատկանում են սանիտարական վտանգավորության III-V դասին: Արտադրական արտանետումները հիմնականում առաջանում են բնական գազի այրումից: Ներկայումս համայնքներում ֆոնային աղտոտվածությունը՝ աղտոտող բոլոր նյութերով, զգալիորեն ցածր է սահմանային թույլատրելի կոնցենտրացիաներից (ՍԹԿ): Հեռանկարում նախատեսված է բոլոր ձեռնարկությունների համար 5-10% արտադրողականության աճ: Ընդամենը արդյունաբերական արտանետումները կազմում են 24,0 տ/տարի: Հեռանկարում նախատեսված է ջեռուցման համար փայտը փոխարինել գազով և արևային էներգիայով: Ջեռուցման ժամանակ վնասակար արտանետումների հաշվարկները կատարված են գազի ծախսից ելնելով 50%, արևային էներգիա – 50 %:

Մթնոլորտ վնասակար արտանետումների հիմնական մասը բաժին է ընկնում ավտոտրասպորտին, որի արտանետումները կազմում են մթնոլորտ արտանետումների 99,1 %-ը: Մթնոլորտ վնասակար արտանետումների քանակը ջեռուցումից, արդյունաբերությունից և ավտոտրանսպորտից կազմում է 3206,21 տ/տարի: Մթնոլորտ վնասակար արտանետումներից «Աշոցք» համայնքների տարածաշրջանի տնտեսությանը հասցված տնտեսական վնասը կազմում է 82,81 մլն. դրամ տարի: Հեռանկարում ջեռուցումից արտանետումները կնվազեն տարեկան 39,89 տ/տարի ի հաշիվ ջեռուցման նոր տեխնոլոգիաների:

Անթրոպոգեն թույլ ազդեցության գոտին կազմում է 52593,24 հա: Ըստ հիգիենիկ գնահատականի, տարածքը վտանգ չի ներկայացնում: Տարածքի համալիր գնահատականը՝ բարենպաստ:

Նշված համայնքների տարածքում գետ է թափվում տնտեսակենցաղային հոսքաջրերի մի մասը, ինչը հանդիսանում է գետի աղտոտվածության հիմնական աղբյուրը: Քաղաքային և գյուղական համայնքների աշխարհագրական դիրքը թույլ չի տալիս «Աշոցք» ամբողջ տարածաշրջանի համար մեկ միասնական կեղտաջրերի մաքրման կայանի ընտրություն: Տնտեսակենցաղային հոսքաջրերի մաքրման համար գյուղական համայնքներում, նախատեսված է տեղադրել տարբեր արտադրողականության «Յալմա-2000» մակնիշի կենսաբանական մաքրման կայան: Մաքրման կայանն ունի բազմաստիճանային մաքրման կառուցվածք և ներառում է ավազան (աերոտենկ), երկու պարզարան, պոմպային հատվածամաս: Մաքրման արդյունավետությունը 98%:

սեպտիկ խուց, անաերոբ կենսաբանական ռեակտոր, կենսազտիչ առաջին և երկրորդ աստիճանի օդավորման:

«Աշոցք» տարածաշրջանի համայնքներում հեղեղատար կոյուղու բացակայության արդյունքում գարնանային ձնհալի և աշնանային հորդ անձրևների ժամանակ հնարավոր են տարածքների հեղեղումներ: Այս երևույթից խուսափելու նպատակով բոլոր համայնքների համար առաջարկված է հեղեղատար առուների նախագծում և կառուցում: Տարվա ընթացքում անձրևաջրերի քանակը հաշվարկված է գործող մեթոդակարգի համաձայն: Տեղումների տարեկան քանակը կազմում է 670մմ: Բնակավայրերի տարածքի մակերեսը՝ 1825,52 հա:

Նշված գյուղական համայքներում աղմուկի աղբյուր է հանդիսանում ավտոտրանսպորտը: Համայնքների տարածքներով հիմնականում անցնում են տեղական նշանակության ճանապարհներ և Մ-1 ավտոմայրուղին: Տրանսպորտային հոսքերի աղմուկն առաջանում է

մեքենաների աղմուկից և կապված է տրանսպորտի արագությունից և շարժման ինտենսիվությունից: Մեքենաների շարժման ինտենսիվությունը չի գերազանցում ժամում 150 մեքենա: Ձայնի էկվիվալենտ մակարդակը հաշվարկման կետում, որը հեռացված է 25 մետրով ճանապարհի երթևեկելի մասից, հաշվի առնելով կառուցապատված զանգվածը, կազմում է 40-45 դԲԱ՝ 45-50 դԲԱ նորմայի դեպքում:

«Աշոցք» տարածաշրջանը ներառում է 52593,24 հա հողեր: Քանի որ հողային ֆոնդում պահուստային հողեր չկան, ապա հողերի նպատակային նշանակության փոփոխությունից հետո ընդհանուր տարածքի մակերեսը փոփոխության չի ենթարկվի:

Նշված քաղաքային և գյուղական համայնքներում սանիտարական մաքրման ենթակա տարածքը կազմում է 1825,52 հա մակերես, 11 հատ աղբավայր: Աղբահանումը կատարվում է անկանոն, ինչը հանգեցնում է համայնքների սանիտարական վիճակի վատացմանը: Հաճախակի են աղբի կուտակումները հենց բնակելի տների բակերում: Որոշված է գոյություն ունեցող աղբավայրերի տարածքները պարսպապատել, բարեկարգել: Աղբահանությունը դարձնել կազմակերպված, տոփանել և հողով ծածկել, մինչև ամբողջ համայնքների համար աղբամշակման գործարանի նախագծումը և կառուցումը, կամ կազմակերպել աղբի տեսակավորում: Հեռանկարում բնակչության թիվը կկազմի 8301 մարդ: Թափոնների ընդհանուր քանակը հեռանկարում կկազմի ~ 2075,25 տ/տարի:

Արդյունաբերական բոլոր ձեռնարկությունները պատկանում են սանիտարական վտանգավորության IV-V դասին: Արդյունաբերական թափոնների մասին տեղեկությունները բերված են առկա իրավիճակի գնահատման բաժնում: Հեռանկարում սպասվում է թափոնների քանակի ավելացում ~ 10%-ի չափով:

Յուրաքանչյուր գյուղական համայնքում տեղակայված է 1 գերեզմանոց: Ընդհանուր թիվը կազմում է 11 հատ, իսկ ընդհանուր տարածքը կազմում 12 հա: Գերեզմանոցները գործող են: Ծրագրով նախատեսված է գերեզմանոցների պարսպապատումը ՍՊԳ-ի չափերով հետագա հուղարկավորումների ընթացքում այն չխախտելու համար: Այն հատվածներում, որտեղ ՍՊԳ-ն պահպանված չէ, նախատեսվում է ճանապարհի երկկողմանի սահմանազատում՝ ծառուղիների միջոցով և գերեզմանոցի պարագծով երկշարք ծառապատում: Գերեզմանոցների ճանապարհի եզրային հատվածներում, նախագծով նախատեսված է տարածքի բարեկարգում և կանաչապատում, ինչը կնպաստի փոշու արտանետումների տարածման կանխարգելմանը:

Ներկա դրությամբ գյուղական համայնքներում ընդհանուր օգտագործման կանաչ տնկարկները (զբոսայգիներ, զբոսապուրակներ, պուրակներ և այլն) ընդհամենը կազմում են 1,2 հա: Շինարարական նորմերի համաձայն գյուղական համայնքներում ընդհանուր օգտագործման կանաչ տնկարկների մակերեսը պետք է կազմի 12 մ²/մարդ, իսկ փոքր քաղաքների համար 10 մ²/մարդ: Տնամերձ հողամասերում կանաչապատման մասը տատանվում է 0.5-ից 0.56: Համայնքներում ընդհանուր օգտագործման տարածքների մակերեսը կկազմի 9,96 հա, իսկ սահմանափակ օգտագործման կանաչը շուրջ 1642,97 հա:

Ծրագրով նախատեսված նոր արդյունաբերական ձեռնարկությունների և հասարակական շինությունների կառուցումը և գործարկումը չեն հանգեցնի հողի դեգրադացման և աղտոտման: Մթնոլորտ արտանետվող փոշին իր մեջ չի պարունակում ծանր մետաղների տարրեր, ինչը բացառում է նրանց ներթափանցումը հող, փոշու ցրման և նստեցման գործընթացներում:

«Շիրակ 6» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծի գործունեության ընթացքում առաջարկվում է իրականացնել ազդեցության մշտադիտարկում (մոնիթորինգ) և հետնախագծային վերլուծություն:

Դա թույլ կտա հիմնադրույթի գործունեության ընթացքում վերլուծել և դիտարկել համայնքների զարգացման իրատեսական սցենարները՝ նախանշելով առավել գրավիչ և արդի հեռանկարային ուղղությունները, ներդրումների համար ուշագրավ ոլորտները, ինչպես նաև

տարածաշրջանի բնապահպանական խնդիրների ներգրավման և դրանց հնարավոր լուծումներին ուղղված համապատասխան միջոցառումները:

Շիրակի մարզպետարանն առաջարկում է «Աշոցք» գյուղական համայնքների համար աղբի հեռացման, տեսակավորման և վերամշակման վայր նախատեսել, համայնքներին հարակից 8 հա մակերես ունեցող աղբավայր՝ միաժամանակ կոնսերվացնելով նշված համայնքներում առկա աղբավայրերը:

Հեռանկարում բնակչության թվի ավելացման, IV-V դասի արդյունաբերական ձեռնարկությունների շահագործմանբ, անասնապահության, հողագործության զարգացման հետ զուգահեռ նկատվում է օդի, հողային և ջրային պաշարների աղտոտվածության աննշան ավելացում, սակայն նախատեսված բնապահպանական միջոցառումների ներդրման արդյունքում (ավտոտրանսպորտի արտանետումների վերահսկում, կեղտաջրերի մաքրման կայանների շահագործում, թափոնների կառավարում): Տարածքը մնում է թույլ աղտոտվածության գոտում, այսինքն նորմայի սահմաններում:

Պատճառաբանական մաս. Շիրակի մարզպետարանում օրենսդրությամբ սահմանված կարգով, իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեությանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, պաշտպանության նախարարությունները, քաղաքաշինության կոմիտեն, կադաստրի կոմիտեն և Շիրակի մարզպետարանը:

Փորձաքննական պահանջներ

Հիմնադրութային փաստաթղթի շրջանակներում նախատեսվող գործունեությունների ծրագրային և նախագծային փաստաթղթերը՝ մինչև իրականացումն անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել շրջակա միջավայրի նախարարություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Հայնախագիծ» ԲԲ ընկերության կողմից ներկայացված Շիրակի մարզի «Աշոցք» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի նախագծի մշակման ՇՄԱՌԳ հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխ. մասնագետ՝ Հ. Մեսրոպյան